
Փորձերի տարրեր վարիանտներից վերցված սերմացուի փորձարկման միջոցով ստուգվել է այդ միջոցառումների ազդեցությունը սերմացուի որակի վրա:

Ծերատումը կոկոնակալման շրջանում և հատկապես ծաղկման սկզբում դրականապես է ազդում սերմացուի որակի վրա:

Թփի հնձումը, մահավանդ ծաղկման վերջում, սերմացուի վրա բացասական ազդեցություն է գործում:

Փորձերի արդյունքները ցույց են տալիս, որ վեղետացիայի ընթացքում նշված ֆիտոտեխնիկական միջոցառումներով, որոշակի սահմաններում, կարելի է փոփոխություններ առաջացնել կարտոֆիլի բույսի աճման ու զարգացման պրոցեսում:

Ծաղկման շրջանում ծաղկարույլերի հեռացումից բերքատվության բարձրացումը պետք է բացատրել նրանով, որ ծաղիկների կողմից ծախսվող պլաստիկ նյութերը կուտակվում են պալարներում:

Բնական մահացման սկզբում թփի հնձումից ստացվող բերքատվության բարձրացումը բերում է այն հետևության, որ թուփը այդ շրջանում ավելի շատ պլաստիկ նյութեր է ծախսում կենսական պրոցեսների վրա, քան ի վիճակի է սինթեզել այդպիսիք:

Այդ շրջանում թփի հնձման կարևորությունը ոչ միայն բերքատվության բարձրացումն է, այլև հիմնականում այն, որ հեկտարից կարելի է ստանալ սունվազն 35—40 տոննա սիլոսային զանգված, կամ 8—10 ց կոշտ կեր: Թուփը շորանալուց հետո համարյա անհնար է այն հավաքել: Պետք է նկատի ունենալ նաև, որ թուփը հեռացնելուց հետո պալարների բերքահավաքը կատարվում է համեմատաբար հեշտ և որակով:

Л И Т Е Р А Т У Р А

1. Братовский А. Журн. Картофель и овощи, 6, 1960.
2. Букасов С. М. Картофель. Труды по прикладной ботанике, генетике и селекции. Том XV, вып. 2, 1925.
3. Линник Н. П. Журн. Картофель, 2, 1957.
4. Очинян С. А. Испытание некоторых приемов возделывания картофеля в условиях Степанаванского района АрмССР, Ереван, 1955, диссертация.
5. Успенский Е. М. Биология цветения картофеля. Труды НИИКХ, 1935.
6. Arenz В. Grundsatzliches uber Frührodung Zeitschr. Der Kartoffellaß № 6 Hamburg, 1959 у.
7. Jchnell К. Blüten bildung und Ertrag bei der Kartoffel Angewandte Bot Belb, Berlin 1923 у.

КРАТКИЕ НАУЧНЫЕ СООБЩЕНИЯ

В. Е. АВЕТИСЯН

НОВЫЙ ВИД БУРАЧКА (р. ALYSSUM L.) ИЗ АРМЕНИИ

Alyssum hajastanum Avet., sp. nov.—Sect. Eualyssum Bolss. Suf-frutescens, lepidoto-canum, ramosissimum. Ramis simplicibus, ascendenti-bus, 5—15 cm alt. Foliis angusto-lanceolatis, ad basin angustatis, attenua-tis, 10—15 mm lg., 1,5—2,5 mm lat. Racemis fructiferis simplicibus 2—4 cm lg. Sepalis 2 mm lg. Petalis pallide flavis, retustis, 5 mm lg. Fila-mentibus majoribus ala unilaterali supra medium attenuatis, minoribus ba-si appendice libera absitis. Siliculis orbiculatis vel ovalibus, apice retu-sis; valvis convexis, lepidoto-canis, 3,5—4 mm lg., 3—4 mm lat. Stylo 2—2,5 mm lg. Loculis bivulvatis. Seminibus apteris, brunneis.

Typus: Armenia, lac. Sevan, rip. Günel, mont. Sari-Günel, in declivis aridis meridionalis, 2600 m, 4 VII 1928, A. Schelkovnicov et E. Kara-Murza.

Habitatio: In locis lapidosis; aridis, regionis montanae superioris Transcaucasiae australis (Armenia)—l. c., prope Sordja, 19 VI 1928, A. Schelkovnicov et E. Kara-Murza.


Affinitas. Haec species *A. armenum* Bolss. et *A. muelleri* Bolss. et Buhse proxima, sed a prima petalis pallide flavescens (nec vittatis) et pubescentibus lepidoto-canis, breve stellatis (nec longe stellatis, canescentibus) differt, a secunda filamentis majoribus unilaterale alatis et minoribus basi appendiculatis (nec omnibus a basi ad apicem attenuatis), siliculis apice retusis, foliis angustioribus (nec obovato-linearibus), sepalis et petalis minoribus differt.

Полукустарник, серый от чешуйчатых волосков, от основания сильно разветвленный. Стебли простые восходящие, 5—15 см высоты. Листья узколанцетные, в основании суженные, оттянутые, 10—15 мм длины, 1,5—2 мм ширины. Соцветие простая кисть, во время плодоношения 2—4 см длины. Чашелистики 2 мм длины. Лепестки бледно-желтые, слегка выемчатые, 5 мм длины. Длинные тычинки с одно-сторонним крылом, от середины кверху постепенно суженным; ко-роткие тычинки в основании со свободным придатком. Стручочки ок-руглые или овальные, под столбиком слегка выемчатые, с выпуклыми чешуйчато-опушенными створками, 3,5—3 мм длины, 3—4 мм шири-ны. Столбик 2—2,5 мм длины. Гнезда 2-семянные. Семена коричне-вые, бескрылые.

Тип: Армения, Арегунийское побережье оз. Севан, г. Сари-Гю-

ней, на южных сухих склонах, 4 VII 1928. А. Шелковников и Э. Кара-Мурза.

Обитание: на сухих склонах верхнего горного пояса—там же, окрестности с. Шоржа, 19 VI 1928, А. Шелковников и Э. Кара-Мурза



1. Цветущий экземпляр. 2. Плодоносящий экземпляр: а) лепесток, б) чашелистик, с) длинные тычинки, d) короткие тычинки, е) стручок, f) чешуйчатый волосок стручка, g) чешуйчатый волосок листа.

Близок к *A. armenum* Boiss. и *A. muelleri* Boiss. et Buhse. От первого отличается чешуйчато-серым (а не седым) опушением из коротко-лучевых (а не длинно-лучевых) чешуек, бледно-желтыми (а не яично-желтыми) лепестками. От второго—тычинками: длинными с односторонним крылом и короткими, в основании снабженным придатком (а не всеми бескрылыми, от основания до верхушки постепенно суженными); стручками на верхушке выемчатыми и более мелки-

ми, а также более узкими листьями (не обратнойцевидно-линейными) и более мелкими чашелистиками и лепестками.

Վ. Ե. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ALYSSUM L. ՅԵՂԻ ՆՈՐ ՏԵՍԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Ա մ փ ո փ ո լ մ

Հոդվածում նկարագրված է Alyssum L. ցեղի նոր տեսակ, A. hajastanum Avet., որը շատ մոտ է A. armenum Boiss. և A. muelleri Boiss. et Buhse տեսակներին:

Նոր տեսակը առաջինից տարբերվում է բաց դեղին պսակաթերթիկներով և ավելի կարճ ճառագավթավոր մազիկներով, երկրորդից՝ առեչների թևիկներով, որոնք օժտված են թևերով և հավելվածներով (ոչ թև առանց արդպիսիների), վերևում թեթևակի գոգավոր պատիճակներով, ավելի մանր բաժակաթերթիկներով ու պսակաթերթիկներով և ավելի նեղ տերևներով:

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ»: ԳԻՏԱ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲՅՈՒԼԵՏԵՆ № 1

Հրատարակություն Հայաստանի Բնության պահպանության ընկերության,
Երևան, 1961, 69 էջ, գինը 30 կ.:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին խոշոր տարիներից խնդիր էր դրվում ունենալ բնագիտական մասսայական հանդես հայերեն լեզվով: Ենթադրյալն էր, որ մի հանդես ունենալու հրամայական պահանջն ազելի է սուր դրացվում, մի հանդես, որը թեկուզ փոքր չափով մատուցեր բնությունը սիրող հայ բնակչությանը այնպիսի նյութեր, որպիսիք հրատարակում են «Природа», «Наука и жизнь», «Знание сила», «Техника молодежи» և ուրիշները: Հրատարակվող այլ գիտա-մասսայական հանդեսները: Եվ ահա վերջերս սկսեց հրատարակվել Հայաստանի բնության պահպանության ընկերության գիտա-մասսայական բյուլետենը՝ «Հայաստանի բնություն», որի № 1-ը յուրս տեսակ սույն թվականի հուլիսին: Ենթադրյալն էր, որ այն խոստանում է իր լեզվով յուրաքանչյուր մեր սկսվող լեզվաբանական, կենդանական և հանրային աշխարհին վերաբերող հարցերը: Ենթադրյալն էր, որ նա կկարողանա թեկուզ մասամբ բավարարել այն մեծ պահանջը, որ կարևորագույն բնասերների մեջ: Սա մի գեղեցիկ գործ է, մի վաղուց ըզձայի ձեռնարկում, որի երևան գալը պետք է սրտանց ողջունելու: Հույս տածենք, որ «Հայաստանի բնություն» հանդեսին կհաջողվի մեծ չափով օգնել ընկերությանը իր շնորհակալ գործում ի մի բերելու: Հայաստանի բոլոր բնագետների, բոլոր բնասերների, անխտիր բոլոր աշխատավորների ուժերը և գործելու այն հրապուրիչ նշանարանով, որը բերված է հանդեսի առաջին էջում՝ «Պահպանենք և հարստացնենք հայրենի բնությունը»:

Այս նշանարանի ոգով է գրված առաջնորդող հոդվածը, որտեղ հայտարարվում է, որ բնության պահպանումը համաժողովրդական գործ է: Ենթադրյալն էր, որ խիստ շնորհակալ խնդիրներ են դրվում՝ մասսաների մեջ ցարգացնելու: Ենթադրյալն էր, որ հոգատար վերաբերմունք մեր բնության հարստությունների և նրա գեղեցկությունների նկատմամբ, ուսումնասիրելու այդ հարստությունները: Ենթադրյալն էր, որ պրոֆիլը, թվարկվում են նրա լեզվով յուրաքանչյուր հարցերը: Հանդեսի առաջին բաժնի վերնագիրն է

«Հայաստանի անտառները», ապա ազելի ցած գրված է մի երկրորդ վերնագիր՝ «Անտառներն ու բուսական ռեսուրսները»: Թե ինչու բաժինը երկու վերնագիր ունի և ինչու բուսական ռեսուրսներ ազելի լայն հասկացությունը կցված է անտառներին, միայն խմբագրությունը կարող է բացատրել: Այս բաժինը հողածններով ամենահարուստն է: Հողագիտություն և սելեկտային բույսերի մասին այստեղ երեք հոդված կա, երեք հեղինակների՝ Յա. Մուրթիջանյանի, Շ. Ասլանյանի և Շ. Գրիգորյանի հոդվածը «Ջանգղուրի անտառների հողագիտություն և անտառապահպանություն» (առաջին հոդված), Պ. Խուրշույանի «Մեր հողագիտություն և արժեքավոր բույսերը» վերնագրված, պետք է կարծել, հողածառաբուծության հողագիտությունը՝ «Արջատիլներ» (հինգերորդ), Ա. Ն. Արրահամյանի «Կոպկասյան մրտավարդը Հայաստանում» (տասնմեկերորդ): Այս երեք հողագիտության առաջինում նկարագրված են Ջանգղուրի համար հողագիտություն երեք ժողովուրդականներ՝ արևելյան հաճարենին, կենին և արևելյան սոսին, որոնցից վերջինը միայն այստեղ է հանդիպում, իսկ մյուս երկուսը՝ նաև սկսվող լեզվաբանական այլ շրջաններում: Երկրորդ հողագիտում նկարագրվող արջատիլներն մեզ մոտ հանդիպում է միայն Իջևանի անտառներում: Երեք հողագիտության նյութն էլ հետաքրքրական է թե՛ գիտական և թե՛ մանավանդ այդ հողագիտություն արժեքավոր ժողովուրդականներն ու թուփը սպասանելու և բազմացնելու առումով, որպիսի առաջարկ անում են հեղինակները: Պարզ չէ, թե ինչու այս նույնատիպ հողագիտությունը իրար հետևից չեն գրված, այլ ցրված են բաժնով մեկ:

Ենթադրյալն էր, որ այդ գիտությունը կարելի է անել նաև երկու ուրիշ հողագիտություն նկատմամբ, որոնք վերաբերում են բնությունը հարստացնելու հարցերին: Այդ երկու հողագիտությունն են՝ Մ. Գասպարյանի «Հարստացնենք Սևանի գեղեցիկ բնությունը» (երկրորդ) և Գ. Սահանյանի «Պահպանելու հարստացնելու կիրովականի բնությունը» (իններորդ): Այս երկու հողագիտությունը առաջինում խոսվում է Սևանա լճի նշանակության, երբեմնի նրա ավերը անտառածածկ լինելու

մասին, ջրից ազատված հատակը անտառապատեցու, այդ ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքների, ինչպես և նրա շուրջը կանաչ գոտի ստեղծելու գրավիչ հարցի մասին: Մյուս հողվածում նկարագրվում է լոռու և Փամբակի առաջներում իր հարստությամբ և բույսերի ու կենդանիների հմայիչ ներդաշնակությամբ այժի բնկենդ բնությունը և նրա հետագա աղքատացումը՝ անտառների անխղճորեն ոչնչացնելու պատճառով: Այս հեղինակը կանգ է առնում նրա վիճակի վերականգնման և հետագա զարգացման հարցերի վրա: Ի միջի այլոց նա իրավամբ նշում է, որ մի քանի գործարանների արտադրած թունավոր զագերը և կեղտաջրերը մեծ վնաս են հասցնում մարդկանց՝ կեղտոտելով և թունավորելով սպիտակ, ինչպես նաև բուսականությունը, թռչուններին, ձկներին:

Մի գրավիչ հարցի է վերաբերում վախժանգ Անանյանի «Աղնվացենք վայրի պտղատու ծառերը» հոդվածը, որի վերնագրի տակ բերված է հետևյալ լավատեսական նշանարանը՝ «Թող լինի պտուղների առատություն մեր երկրում»: Պատկերացնում եք, հատուկ հողատարածություն պետք չէ, վայրակներ՝ պատվաստակալներ աճեցնել պետք չէ (այդ մասին «հողացել» է բնությունը), արմատները ձևավորելու և խնամելու կարիք չկա: Հարկավոր է անտառում աճող վայրի պտղատու ծառերի և թփերի վրա ազնիվ սորտեր պատվաստել միայն և կարճ ժամանակում կուսնենանք հազարավոր հեկտարներով անտառայիններ՝ շատ ու շատ պտուղներով: Արդարապես ձգտում, հմայիչ նպատակ: Պետք է առնել, որ այդ ուղիով գնացել են մեր նախնիները հարյուրամյակներ առաջ: Հիմա էլ մոլուտներն ու անտառները հատելիս և հողը՝ ցանքի համար բացելիս անտառահատի ձեռքը չի բարձրանում վայրի պտղատու ծառերի վրա, և սրանք մնում են դաշտերում մենավոր կամ փոքր խմբերով: Արոջ տեղերում (Մայկուպ, Ալմա-Աթա) այդ վայրի պտղատուների բազայի վրա բնյարձակ անտառայիններ են ստեղծվել: Մեզ մոտ՝ Հայաստանում նույնպիսի փորձեր արվել են Մտեփանավանում, Կիրովականում, Գառնիում և այլուր: Այդ փորձերից մի քանիսին մասնակցել է նաև սույն տողերի հեղինակը: Ընտանադիրներ ստեղծելու շարժումը մի ողակն է այն շղթայի, որ բնությունը հետզհետե, մաս առ մաս անցնում է մարդու հսկողության տակ, մտնում է նրա կուլտուրական գործունեության ասպարեզը, բնյարձակում նրա պլանային տնտեսության մեջ: Ինչպես հոդվածի հեղինակ Վ. Անանյանն է գրում «...թերեւս գա մի ժամանակ, երբ մեր անտառներում վայրի միջոց նույնքան դժվար հարվի, ինչպես այժմ արևտանիս միջոցն է հազվադեպ անտառի մեջ»: Սակայն չպետք է շատ

էլ հեշտ պատկերացնել այս գործը: Այստեղ հրմտություն է պահանջվում թե՛ սորտերի բնորոշման մեջ, թե՛ ծառերը ձևավորելիս, թե՛ սորտերի բաշխման մեջ, թե՛ վնասատուների և հիվանդությունների դեմ պայքար կազմակերպելիս և այլն: Չպետք է մոռանալ Ի. Վ. Միշուրինի ուսմունքի այն դրույթը, որ վայրի ծառերը խիստ կայուն են իրենց ժառանգականությամբ և ազդում են նրանց վրա պատվաստած ազնիվ սորտերից շատերի վրա և վատթարացնում պտուղների որակը: Պետք է սորտերի բնորոշությունը կատարել շրջահայաց կերպով, հարկավոր է հիմնականում վերցնել սեղական պայմաններին վարժված և ժառանգորեն կայունացած սորտեր, որովհետև նորաստեղծ և երիտասարդ սորտերը մեծ մասամբ հեշտ են ենթարկվում վայրի պատվաստակալի ազդեցությանը: Ուրիշ բան, եթե պատվաստենք սերմից աճած միամյա կամ երկամյա վայրակները, ինչպես հեղինակն էլ առաջարկում է, այստեղ արդյունքն ավելի ուշ կբուստացվի, բայց ավելի հաջող: Չպետք է մոռանալ նաև, որ պտղատու ծառերից շատերի բերքը ապահովվում է միայն մատակարարում համապատասխան փոշոտիչ լինելու դեպքում:

Մենք դժվարանում ենք հավատալ հեղինակին, թե 1962 թվականին կավարտվի մեր անտառների բոլոր վայրի պտղատուների պատվաստումը: Կարծում ենք, որ այդպիսի հապճեպությունը գործին շատ օգուտ չի բերի, էլ չենք ասում առաջարկի անհնար լինելու մասին: Թող այդ գործի կատարումը մի քանի տարի տևի, մինևույն է, ոռոմանտիկան նրանից չի վերանում, իսկ արդյունքը, թեպետ մի փոքր ուշ, բայց ավելի հաջող կլինի:

Նրկու հոդված էլ կա նոր պտղատու ծառեր տարածելու մասին: Մեկը պատկանում է Լ. Հնֆիաջյանի դրչին և կոչվում է «Տարածենք արևելյան խուրման Հայաստանում» (չորրորդ): Խոսքն այստեղ մի մերձարևադարձային պտղատու ծառի մասին է, որն արդեն փորձարկվել է մեր ռեսպուբլիկայի սրոշ կետերում և լավ արդյունք է տվել, մանավանդ նրա սրոշ սորտերը: Մյուս հոդվածը վերնագրված է «Հայաստանում հնարավոր է աճեցնել շագանակենի» (վեցերորդ), հեղինակն է Կ. Ի. Ալյամյանցը:

Հետաքրքրական է «Մեր դեղաբույսերը» հոդվածը, որը գրել է Ս. Ջոլոտնիցկայան: Միայն թե հոդվածում բնդհանրապես բոլոր դեղաբույսերի մասին չի դրված, ինչպես կարելի էր ենթադրել վերնագրից, այլ միայն մեկ դեղաբույսի՝ չիկատակի մասին: Հատ երևույթին, մոռացել են զնել ենթավերնագրից, Քաջի դրանից, վերնագրի և հեղինակի ազգանվան փոխադարձ դասավորությունից երևում է, որ Ս. Ջոլոտնիցկայան շարունակելու է այդ շնորհակալ գործը, և հետա-

յա համարներում մենք կկարգանք այլ գեղարույսերի մասին, որոնցով այնքան հարուստ է մեր սեպուղիքիս:

Հայաստանի վայրի ցորենների տարածման և ուսումնասիրման մասին պիտի լ Պ. Ա. Ղանդիլյանը: Բերված տեղեկությունների շարքում հեղինակը չի հիշատակում այն փաստը, որ սույն առղերի հեղինակը 1925—1929 թվականներին վայրի ցորենների մեծ մասսիվներ է հայտնաբերել Արևանի շրջակայքում, այդ մասսիվներում է գտնված առաջին պիկտոգրաֆի ցորենը:

Վերջապես, մի փոքր հոդվածում՝ «Սևանի բուսարանական այգին», Վ. Աղարյանը շարադրել է նրա տասնյոթամյա գործունեության արդյունքները: Պետք է ասել, որ Սևանի ափին այդպիսի փորձագիտական հիմնարկ ունենալը շատ կարևոր է, և այսին պայմանի աշխատանք է կատարել: Բավական է ասել, որ նրան հաջողվել է հոդվածով հարուստ այդ ծառամերձ համարվող վայրում աճեցնել ավելի քան 450 տեսակ ծառեր ու թփեր: Այդին կատարել է նաև այլ աշխատանքներ:

Հետևյալ մեծ բաժինն է «Հողերի պաշտպանությունը և ջրային ռեսուրսները»: Առաջին էջի վերևում, նկարի հետ գրված է «Պաշտպաններ մեր հողերը Հողախառնի» նշանաբանը: Եթե մենք Ա. Քոչարյանի համարյա նույնանուն հոդվածից բերենք միայն մեկ տվյալ, որ վերջին տարիներին Հողախառնի պատճառով մոտավորապես 126,000 հեկտար տարածություն դուրս է մնացել պայտապատեցման օգտագործումից, ապա այս ահալոր թվից մեկ համար պարզ կլինի, թե որքան կենսական հարց է շոշափում հեղինակը: Նա իր հոդվածում հակիրճ տալիս է մի շարք գատնություններ Հողախառնի մասին, առաջարկում է միջոցառումներ նրա դեմ պայքարելու համար:

Այս բաժնի երկրորդ հոդվածը՝ «Կանաչ կերային տարածությունների պահպանումը», պատկանում է Շ. Մ. Աղարարյանի գրչին: Հոդվածը բովանդակալից է:

Շատ կարևոր հարց են շոշափում Ա. Գևորգյանը և Ն. Շեկոյան «Մայրենի օգտագործողները ջրային ռեսուրսները» խորագրի կրող հոդվածում: Նրանք կսկզբնապես ավելի են բերում առանձին ջրային ռեսուրսների օգտագործման կանաչների մասին, չրի կորստի պատճառների մասին: Շատ ցանկալի կլինի, եթե նրանք, թեև կա այդ մասը կրճատելու հաշմին, ավելի մանրամասն պիտի, թե ինչպես պետք է մարմնի մեր երկրի համար ամբողջ կարևոր ջրային ռեսուրսները ուղղորդել օգտագործելու համար: Ըստ էրևույթի, նրանք այդ հարցը կրճատելիս իրենց հետադարձ հարձակում:

«Մայրենի օգտագործումը և բույսերի պաշտպա-

նությունը» բաժնում վեց հոդված կա: Չ. Ա. Աստվածատրյանը իր «Հումադադիկ» հոդվածում նկարագրում է ուղղաձիգ կանաչապատման համար արժեքավոր, ներմուծած մի նոր փաթաթվող բույս՝ լուսնածաղիկը, որն աճում է մինչև 8—10 մետր:

Ա. Մ. Բարսեղյանը իր «Ջրաշուշան» հոդվածում ջրամբարների շրջանի և ջրաբույսերի անհետացման մասին արած մի քանի խորհրդածություններից հետո նկարագրում է ջրերի գեղեցկուհի ջրաշուշանը կամ հարսնամատը, նրա բնույթի և գեղարարիկ արժանիքները: Հեղինակը գտնում է, որ ջրաբույսերի այդ տեսակը պետք է տարածել մյուս բնական և արհեստական ջրամբարներում:

Ապա բերված են Ա. Սրբաշուշանի կազմած «Խորհուրդներ սենյակային բույսերի խնամքի մասին»: Շատ ցանկալի է ծավալել այդպիսի խորհուրդները նաև մյուս բաժինների վերաբերյալ՝ թռչուններ և այլ կենդանիներ պահելու, հավաքածուներ կազմելու, բույսեր պատվաստելու մասին և այլն:

Այդ նույն բաժնում երեք հոդված կա բույսերի պաշտպանության վերաբերյալ: Ն. Հ. Կարապետյանի «Ոչնչացնենք գաղձն ամենուրեք» հոդվածում նկարագրված են գաղձի մեկ մաս հանդիպող երեք ամենավնասակար տեսակները: Ինչպես կարելի էր ենթադրել վերնագրից, այստեղ բերված պետք է լինեին նաև նրանց դեմ պայքարելու միջոցառումները, սակայն դրանց մասին համարյա ոչինչ չկա:

Հ. Գ. Քումայանի «Թռչունները մեր պաշտպանությանը» և անտառների պաշտպաններն են» հոդվածը կարգալով՝ սկսում էս ավելի շատ համակրել մեր փետրավոր բարեկամներին, որոնք ոչ միայն իրենց ծովուցով աշխուժացնում են մեր շրջապատը, այլև մեծ շահով նպաստում են բերքի պահպանմանը: Հետաքրքիր է գրված նաև պիշախի, բայց օգտակար միջատ գատիկի մասին:

Հաջորդ մեծ բաժինը կոչվում է «Մեր կենդանական աշխարհը» և միայն մեկ վերնագիր ունի: Համարյա նույն վերնագրին ունի հենց առաջին հոդվածը՝ «Հայաստանի կենդանական աշխարհը»: Գ. Ավագյանի այս հոդվածի միայն սկիզբն է բնականորեն առմամբ կենդանական աշխարհին վերաբերում, իսկ նրա մեծ մասում նկարագրվում են պիտափորապես տեսական նշանակություն ունեցող և պաշտպանություն պահանջող մի բաժնի արժեքավոր կաթնասուններ ու թռչուններ՝ առձյամբ, հայկական մուֆլոնը, վայրենակերպը, արոտը և այլն: Հոդվածում խոսվում է նաև ներմուծած և մեր կլիմային վարմանը կենդանիների՝ սև արծաթափայլ ազվե-

սի, ճահճակողրի, ուսուցիչական եղջերուների մասին:

Ներմուծած մի թուղի՝ փաստանի, նրա բխողիայի և մեզ մոտ կազմակերպված նրա տնտեսութեանն է վերաբերում Ա. Հ. Չիլինգարյանի հոդվածը՝ «Փաստանը Հայաստանում»:

Շատ հետաքրքրական է Մ. Գ. Դատիկյանի «Սեանի կենդանական աշխարհը» հոդվածը, որի մեջ հեղինակը պատմում է հատկապես ձկների, նրանց տեսակների, բխողիայի, ներմուծած ձկների, ինչպես նաև մի շարք ձկնարուծական հարցերի մասին՝ կապված լճի մակարդակի իջեցման և փոքրացման հետ:

Նկատելի է, որ երբ հոդվածի վերնագրում կա կենդանական աշխարհի արտահայտությունը, ապա, որպես կանոն, խոսքը վերաբերում է կաթնասուններին և թռչուններին, այն էլ նրանց արժեքավոր տեսակներին: Մի՞թե կրծողները, մանր ու խոշոր գիշատիչները, սողունները, երկկենցաղները կենդանական աշխարհի մասը չեն կազմում: Էլ չենք խոսում կենդանիների ամենամեծ խմբի՝ միջատների, ինչպես և մյուս հոդվածոտանիների մասին, որդերի, փափկամարմինների մասին, վերոհիշյալ հոդվածների հեղինակները սրանց հիշատակելն անգամ արժանի չեն համարում: Կենդանական աշխարհը կենդանական աշխարհ է և ոչ թե միայն որսի կենդանիներ: Կամ թե հարկավոր է վերնագիրը հոդվածի բովանդակությանը համապատասխան դնել:

Այս բաժնի հոդվածներից մեկը վերաբերում է գյուղատնտեսական մեծ նշանակություն ունեցող մեղվին: Հոդվածի վերնագիրն է «Պահպանել բնութեան հրաշագործներին»: Հեղինակն է Ա. Մ. Կոթողյանը:

Ս. Ալգուլյանի «Ակվարիումի կուլտուրան» հոդվածում բերվում են պատմաբան տվյալներ ակվարիումի կուլտուրայի մասին, քննարկվում են նրա նշանակությունը և հետադադարացումը: Հուսով ենք, որ հաջորդ համարներում կարգի, թե ինչպե՞ս պետք է խնամել ակվարիումի բույսերն ու կենդանիները, ինչպե՞ս պետք է այն օդադործել առանձին շրջաններում տարածված ջրային կենդանիներն ուսումնասիրելու համար, ինչպե՞ս պետք է պահել ակվարիումը դպրոցում և այլն:

Վերջապես, բաժնի վերջին հոդվածը՝ «Բարեյազանք որսորդական տնտեսությունը», որի հեղինակն է Հ. Ավետիսյանը, վերաբերում է մի ցավոտ խնդրի՝ հետզհետե նվազող որսորդությանը: Հեղինակը հետաքրքիր տվյալներ է բերում որսորդության վիճակի մասին Սրեանի շրջակայքում 30—40 տարի առաջ և ջույց է տալիս, թե ինչպես որսագողության և արժեքավոր կենդանիները անխղճարար ոչնչացնելու հետևանքով որսը խիստ պակասել է:

Հաջորդ բաժնում, որի վերնագիրն է «Մեր կուրորտային տնտեսները և հանրային ջրերը», բնդամենը երկու հոդված կա: Գրանցից մեկը Ա. Ս. Ջանջուտովայի «Հայաստանի բնական բուսական տնտեսները» խորագիրը կրող հոդվածն է, վերաբերում է մի հրատապ հարցի, որի մասին էլի հոդվածներ կարելի է գրել: Մյուսը Ջ. Ս. Եմազոնյանի «Ջրերի սրբացումը և դիտությունը» հոդվածն է:

Չնայած, որ Հայաստանը շատ հարուստ է զանազան հանածոներով, բայց և այնպես, «Մեր օդատկար հանածոները» բաժնում բնդամենը մեկ հոդված կա՝ է. Գրափիլոսովայի և Մ. Տեր-Սահյանի «Հայաստանի շինանյութերը և նրանց սացիոնալ օդատարածումը»: Այդ հոդվածից երևում է, որ արդյունահանման շատ անկատար եղանակներ կիրառելու պատճառով մեր հիանալի շինաքարի՝ սուֆի միայն մոտավորապես 1/3-ն է օդատարածվում բուն նպատակով, իսկ մնացածը, պատկերացնում եք, մեծ մասը համարյա ապարդյուն կորչում է: Միանգամայն հասկանալի է հեղինակների դժուհուսթյունը այդ երևույթի հանդեպ և նրանց համառ պահանջը՝ դիտությունը շտկելու և կորուստների դեմ ամեն կերպ պայքարելու մասին:

«Պատանի բնասերների անկյուն և բնագիտությունը» դպրոցում» բաժնում մենք տեսնում ենք միայն երկու հոդված: Առաջին հոդվածն է Կ. Վ. Յիցինի նամակը դպրոցականներին՝ «Աճեցնենք զեղին ակացիան»: Այս բույսը թիթեռնածագկավորների բնատնիքին պատկանող մի թուփ է, որը մեզ մոտ մշակվում է որպես զեկորատիվ: Հոդվածում այն միտքն է արձածվում, որ զեղին ակացիայի սերմերը նույնպես կարող են գործնական նշանակություն ունենալ, քանի որ սննդանյութերով, հատկապես սպիտակուցով հարուստ են: Հեղինակը հանձնարարում է այդ թուփը փորձարկել պանդան տեղերում և խնդրում է սերմեր ուղարկել իրեն՝ Մոսկվա, պիտավոր Թուսարանական այգի: Հոդվածի վերջում հանդեսի խմբագրությունը պատանի բնասերներին առաջարկում է տեղերում փորձարկել զեղին ակացիան և արդյունքների մասին գրել իրեն՝ խմբագրությանը: Թվում է, թե խմբագրությունը այլ կերպ պետք է վարվեր՝ նա չպետք է յուրովի կարգադրեր գործը, այլ հիմնականում միայն միջնորդի ու օգնողի պերկատարեր: Մյուս հոդվածն է «Բիոլոգիայի դասավանդման հարցերը» դպրոցում: Հոդվածի հեղինակ Յա. Մուրթիջանյանը սրում է ուշադրությունը դպրոցում բիոլոգիայի դասավանդման անբավարար դրվածքի վրա: Նա իրավամբ պնդում է, որ բիոլոգիայի դասավանդումը կարող է արժեք ներկայացնել միայն այն դեպքում, երբ ապահովված է կենդանի նմուշների ցուցադրումով, արտադա...

տարանային աշխատանքներով հողամասում, կենդանի անկյունում, ինչպէս նաև պէպի բնութիւն կատարած էքսկուրսիաներով: Ցափայի է, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատման քառասունմեկերորդ տարում մենք չեն ստիպուած ենք վերադառնալ այդ հարցին, մանավանդ որ Միութեան շատ տեղերում այդ ուղղութեամբ մեծ գործ է կատարուած: Հուսանք, որ այդ շնորհակալ գործում իր լուծման կմտցնի «Հայաստանի բնութիւն» հանդեսը, և այն էլ ոչ լին բառացի մի լուծաւ, այլ այնքան, որքան վաճի է 60,000 անգամ ունեցող բնկերութեան օրգանին:

Հետաքրքրական տեղեկութիւններ են բերում «Պատանի բնասերների աշխատանքը տեղերում» բաժնում՝ նրանց կազմակերպած «Թրոշնի օրվա», «Մաղկի տոնի», «Այդու շարաթի», «Անտառի շարաթի» մասին:

Ապա նկարագրուած է Այդր լիճը որպէս մեր բնութեան տեսարժան վայրերից մեկը:

«Հայաստանի բնութիւն» հանդեսը հեռու չի մնում երբայրական ռեսպուբլիկաներում և արտասահմանում կատարուած նույնատիպ աշխատանքներից: Համապատասխան բաժնում կա երկու հոդուած՝ «Աստրախանի պետական արդելանոցը» և Խ. Պ. Միրիմանյանի «Բնութեան պահպանումը Լեհաստանում»: Այս բաժնի նշանակութիւնը մեծ է մանավանդ այն պատճառով, որ Հայաստանի Բնութեան պահպանութեան բնկերութիւնը դեռ քիչ փորձ ունի:

Չենք կարող կանգ շտնել «Բնութեան օրացույց» բաժնի երկու հոդուածների վրա: Առաջինը Խ. Մկրտչյանի և Լ. Հարութեանյանի հոդուածն է՝ «Կազմակերպենք ֆենոլոգիական դիտումներ» խորագրով: Դրանց կատարումը մասսայական դարձ է և հատուկ պատրաստութիւններ չի ներկայացնում: Հիմնականում հարկավոր է երկու բան՝ սեր պէպի բնութիւնը ու նրա մեջ կատարվող պարբերական երևույթները և այդ երևույթները դիտելու ու դրի առնելու ցանկութիւն: Ցանկալի է, որ հանդեսի առաջիկա համարներում կամ առանձին պրոյեկտով տպագրուին հրահանգներ, թէ կոնկրետ ի՞նչ օբյեկտներ պետք է դիտել, նրանց պարպացման ո՞ր փուլերը նշել, ինչպէ՞ս կազմակերպել դիտումները, ինչպէ՞ս մշակել արդյունքները, ո՞ր ուղարկել պրանք և այլն:

Հարուստ փորձի և բազմամյա դիտումների հիման վրա է գրուած Ա. Գ. Ներսիսյանի «Գարունը Հայաստանում» հոդուածը:

Ապա հաջորդում են ևս մի քանի կարևոր բաժիններ՝ «Կոնսուլտացիա», «Խրոնիկա», «Գիտական ամսագրերի չհրատարակում», «Հարց ու պատասխան»:

Հանդեսը չի մոռանում այն գործիչներին, որոնք իրենց ամենօրյա մրաջան աշխատանքով

զգալի ներդրումներ են կատարել՝ հարստացնելով և զեղեցկացնելով հայրենի բնութիւնը: Սույն համարում մենք կարգում ենք մեր ռեսպուբլիկայի կանաչապատման և անտառատնտեսութեան վիտերան Մարգարիտա Բեգլարի Դանիելյանի բեղմնավոր գործունեութեան մասին: Բերված է նրա պորտրեն:

Ներկայացուցուած է նաև ծաղկաբուծութեան էնտուզիաստ-հայրենադարձ Գ. Գալայանի պորտրեն:

Խմբագրութիւնը շպետք է մոռանա նաև նախորդ սերունդների այն աշխատողներին, որոնք այժմ կենդանի չեն, սակայն իրենց անձնվեր աշխատանքով նախապատրաստել են մեր այսօրը: Նախասովետական շրջանի մի շարք ամենակարկառուն գործիչներից մեկը Ղևոնդ Ալիշանն է, որը հայրենիքից հեռու դտնվելով հանդերձ՝ միշտ հետաքրքրվել է նրա աշխարհագրութեամբ, նրա բույսերով, զրել է նրանց մասին: Սովետական շրջանի գործիչներից պետք է հիշել լուսավորութեան ճակատի էնտուզիաստ ֆիզիոլոգ Տ. Պ. Մուշեղյանին, որը առաջինը զրել է գիտամասսայական հանդես ունենալու հարցը դեռ 1922—24 թվականներին: Զգալի գործ է կատարել Լ. Լ. Բեղլիյանը, որը ոչ միայն բուսաբանութիւն է դասախոսել մեր ԲՈՒՀ-երում, այլև դասադրքեր է կազմել, ինչպէս և հրատարակել է բույսերի օդընտելացման (ակլիմատիզացիայի) մասին իր պրած առաջին հայերեն ձեռնարկը: Նա երկար տարիներ աշխատել է նաև բույսերի անունների բառարանի վրա: Ա. Գ. Տեր-Պողոսյանի ղեկավարութեամբ և նրա զրքերով են սովորել երիտասարդ կենդանաբանների մի քանի սերունդներ: Լ. Կ. Մաղաքյանը մեր մարգագետինների և արոտավայրերի անխոնջ հետազոտողն է և զել շատ տարիների բնթացքում: Մեծ աշխատանք է կատարել երկրաբան Լ. Կարապետյանը:

Ինչպէս տեսնում ենք, «Հայաստանի բնութիւն» հանդեսը մի շարք բնագագառներ է բնդիրկում և նրա էջերում բերված նյութերը շատ բազմապան են: Այս տեսակետից հանդեսը լավ է սկսել իր գործը: Սակայն նույնը չենք կարող ասել առանձին հոդուածների մասին: Դրանք իրենց որակով շատ խայտարակտ են: Հաճախ իրենց կառուցվածքով լրագրական հոդուած են հիշեցնում կամ պաշտոնական հաշվետվութիւն, բայց ոչ բարձրորակ հանդեսային հոդուած:

«Հայաստանի բնութիւն» հանդեսի անդրանիկ համարում կան լավ գրված, տրամաբանորեն կառուցված հոդուածներ: Դրանցից են՝ «Գարունը Հայաստանում», «Կանաչ կերային տարածութիւնների պահպանումը», ինչպէս նաև «Հուսնածաղիկը», «Չանգեզուրի անտառների հազվագյուտ ծառատեսակները», «Թռչունները մեր

դաշտերի, այգիների և անտառների պաշտպաններն են» և այլն:

Հողվածներից մի քանիսը սկսվում են բնականորեն ներածություններով, որոնք, որպես կանոն, խախտում են նրանց ամբողջականությունը և թուլացնում տպավորությունը: Այդպիսի հողվածներից են՝ «Պայքարենք հողի էտոզիայի դեմ», «Սեանի կենդանական աշխարհը» (առաջին պարբերությունը), «Արջատխյենի» (սկիզբը): Ինչո՞ւ խմբագրությունը այդ ավելորդ գեղումները անխնա չի ջնջել. չէ՞ որ գրանով նա բարի գործ կլիներ կատարած թե՛ հեղինակի և թե՛ մանավանդ բնակրոցիների համար:

Հանդեսի և շրագրի հողվածները նույն սնով չպետք է լինեն կազմված: Այդ տեսակետից ոճի դեմ մեղադրում են հետևյալ հողվածները՝ վերնվում հիշատակված «Պայքարենք հողի էտոզիայի դեմ», «Սեանի կենդանական աշխարհը» (առաջին պարբերությունը), «Ակվարիումի կուլտուրան» (հատկապես նրա վերջին պարբերությունը, ինչ լավ կլիներ, որ այն բոլորովին չլիներ), ինչպես նաև «Հարստացնենք Սեանի գեղեցիկ բնությունը» հողվածի որոշ մասերը և այլն: Մենք կարող ենք դա բացատրել խմբագրության թուլավորությամբ: Արդարացուցիչ հանդամանք կարող է ծառայել միայն այն, որ Հայաստանի բնության պահպանության բնակրությունը գեո շատ երիտասարդ է, իսկ նրա սրգան «Հայաստանի բնությունը» նոր է խանձարուրից դուրս գալիս, իսկ ձևավորման այդ շրջանում պահպանման գեղումներ, ավելորդ բնականորեն հայտարարություններ սովորաբար ավելի շատ են լինում, քան հետևողականորեն կատարվող դործ:

Հանդեսում իրենց տեղը պետք է ունենան գանազան նշանաբանները, դրանք կարելի է բերել առաջնորդությամբ, բաժինների վերնագրերին կից և մի քանի այլ տեղերում, այն էլ շատ սահմանափակ, բայց ոչ երբևէ առանձին հողվածներում: Իրանից հողվածները շատ են հասարակ գտնում՝ նրանց արժեքը խիստ պակասում է, և այն տպավորությունն է ստացվում, որ հեղինակը բուն նյութի վերաբերյալ ասելու շատ բան չունի: Ինչպես գտ սկզբում և կարելի է ներել, որովհետև բնությունը շփոթյուններ, նրա բուսական, կենդանական և հանքային հարստությունները անհողի կերպով վատնողներ, գանազան որսագողներ, ծառազոտներ և այլ կարգի զոյներ ու հասարակական խղճից դուրս մարդիկ գեո կան: Ինչպե՞ս կարող է հողվածագիրը դրանց չկշտամբել: Ինչ սկզբնական պաթետի արտահայտության մի ձևն է, սակայն բոլորովին ոչ խրախուսելի:

Հանդեսում կան նաև թույլ հողվածներ: Ըստ երևույթին, դրանց հեղինակները լավ չեն մշակել իրենց հողվածները, մի քանի անգամ չեն ստու-

գել ու արտադրել, իսկ խմբագրությունն էլ բաց է թողել ստանց 3—4 անգամ բնագրից և շրակելու: Չպետք է մոռանալ, որ հանդեսը գիտամասնագիտական է, և եթե անմշակ տեղերը և սխալները գիտակ բնակրոցին չեն կարող վնասել, ոչ մասնագետին կձգեն անկատարական թյուրիմացության մեջ:

Կանց առնենք հանդեսում հանդիպող գանապատություններից մի քանիսի վրա:

Պետք է ասել, որ հանդեսի որոշ էջերում կան սխալներ, ինչպես և թյուրիմացության տեղեր տվող անփութություններ: Օրինակ, 9-րդ էջի ձախ սյունակում գրված է, որ իբր թե մեզ մոտ վայրի բալ կա: Վայրի բալ բնականորեն գոյություն չունի, տեղ-տեղ հանդիպում է վայրենացած բալին: 10-րդ էջի աջ սյունակում Միշուրինի ստեղծած խնձորենու սորտերի թվում բերվում է նաև «Անտառային գեղեցկուհի» սորտը: «Անտառային գեղեցկուհի» ոչ թե խնձորենու սորտ է, այլ տանձենու: Բացի դրանից, այն ոչ թե Միշուրինն է ստեղծել, այլ ինքնարերարար առաջացել է Բելգիայի անտառներում: Միշուրինը չունի նաև խնձորենու «Շաֆրան» սորտը նա Շաֆրանը (Օռլեանի Ռենեսանս) խաչասերել է խնձորենու այլ սորտերի հետ և ստեղծել է հետևյալ սորտերը՝ Անտանովկա շաֆրանային, Շաֆրանկիտայկա, Շաֆրան-Նյուսիտային աշնանային:

13-րդ էջի ձախ սյունակում, թվում է, թե նույնացված են բուսականություն և ֆլորա հասկացությունները:

29-րդ էջի ձախ սյունակում գրված է, որ սենյակների ու մեկ լուծույթները այրում են արմատները: Սա շատ դործածական արտահայտություն է, բայց սխալ է նկարագրում երևույթը: Կոնցենտրիկ լուծույթներից արմատները ոչ թե այրվում են, այլ շրագրկվում, շորանում են:

31-րդ էջի աջ սյունակում ծիծեռնակներ և մալալուկներ բառերի միջև ստորակետը բաց է թողնված: Ինչ մեծ սխալ չէր լինի, եթե այդ թռչունները սխալմամբ իրար մոտ համարվելիս չլինեին: Միծեռնակները և մալալուկները ոչ միայն տարբեր ցեղերի են պատկանում, այլև տարբեր բնաանիքների: Նույն թյուրիմացությունը կարող է բխել նաև այդ սյունակի վերջին տողերում բերված նախադասությունից՝ «Նույնը կարելի է ասել և ծիծեռնակի այլ տեսակների մասին»: Այս նախադասությունը գրված է մալալուկների նկարագրությունից անմիջապես հետո:

50-րդ էջի աջ սյունակում գրված է, «Գեղին ակացիայի սերմերի սպիտակուցը պարունակում է մինչև 15 տոկոս յուղ և մինչև 10 տոկոս շաքար»: Ապիտակուցը բառը բուսաբանության մեջ գործ է ածվում երկու իմաստով՝ քիմիական և մորֆոսյուրիական: Եթե տվյալ գեղիցում մենք սպի-

տակուց բառը բնորոշները որպես քիմիական հասկացություն արտահայտուց, ապա գծվար է հաշտվել այն մտքի հետ, թե նրա մեջ յուզ ու շարժար կա: Դա կլինի ոչ թե սպիտակուց, այլ էրեք նյութերի խառնուրդ: Ըստ էրեույթին, սպիտակուց բառը այստեղ գործ է ածվում մորֆոլոգիական իմաստով: Լեզուս է նաև կոչվում որոշ բույսերի սերմերի մի հատուկ մասը՝ Լեզուսները: Բայց մենք պարզապես գծվարություն ենք գեմ առնում: Թիթևանաձագկալորների բնատանիքի մեջ մանուկ բույսերի, այդ թվում և գեղին ախապիայի սերմերը Լեզուսներն, այսինքն՝ մորֆոլոգիական իմաստով սպիտակուց չունեն: Լեզու սերմերում բույսը տեսակի սննդանյութերը պակասում են ծիլի առաջին գույզ ձևափոխված տերևներում՝ շաքիչներում:

57-րդ էջի աջ սյունակում գրված է՝ «Կենդանի միջատներով սնվող սիլվիդիա» նախ, այդ անունով բույս գոյություն չունի, բայց էրեույթին, պետք է լինի սալվիդիա, որը ջրաբնակ փոքր պտերաբույս է: Երկրորդ, սալվիդիան էրեք կենդանի միջատներով չի սնվում:

Միայն պետք է համարել, նաև «նույն օրն իսկ» բառերը, որ բերված են 59-րդ էջի աջ սյունակում: Խոսքը վերաբերում է հիշողությունը չփտահեղուկ և դիտումները շտապ գրանցելու կարենությունը: Մեզ թվում է, պետք է խորհուրդ տալ գրանցումները կատարելու «խակույն» ենթ, անմիջապես, դռն նույն օրը:

Գիտական տերմինաչինարարության գործը բնորոշանալուս գեո շատ վատ է գրված, և նոր տերմինները վայրիվերս են կազմվում: Լեզուսը խորանալուս գրա պատճառների մեջ, ասենք միայն, որ տերմինների շփոթությունը խիստ խանգարում է գիտության մասսայականացմանը, էլ չենք խոսում գիտական մտքերը ճշգրիտ արտահայտելու մասին: Կրկնակի ուշադրություն պետք է դարձնել տերմինների ճշտությունը, բնորոշված լինելուն, բարեհեղուկությունը: Թերևս մեր նկատած անհաջող տերմինների մի քանիսն էրեք:

5-րդ էջի ձախ սյունակում սերմ տվող ծառերի համար գործ է ածվում սերմնաբան բառը: Նախ ինչու սերմնաբան (բառացի նշանակում է սերմերի գտնվելու տեղ) և ոչ թե սերմնակալ, սերմնազու: Երկրորդ, կարծում ենք, հարկավոր է կրկնակներին հայտնի պետք է լինի, որ սերմնաբան բառը վաղուց գործ է ածվում որպես անուն վարսանդի ստորին լայնացված մասի, որի մեջ տեղի է ունենում բեղմնավորումը և առաջանում են սերմերը:

Շատ տեղերում տեսակ բառը գործ է ածվում սուրա բառի փոխարեն (էջ 10, 11, 12 և այլն): Իրանը խիստ տարբեր հասկացություններ են և հարկավոր չէ շփոթել:

14-րդ էջի ձախ սյունակում գրված է բրիլլանտ, 16-րդ էջի ձախ սյունակում՝ բոխլենի, 63-րդ էջի աջ սյունակում՝ սոնենի, պետք է լինի թիկի, բոխի, սոնի: Ուրիշ բան է, որ մենք ասում ենք շագանակենի, որովհետև այդ ծառը շաղանակ է տալիս: Հանդեսի այդ տեղերում, բնորոշանալուս, պարզապես ծառերը անվանվում են առանց ենի վերջավորություն: Որինակ, 18-րդ էջի աջ սյունակում գրված է ծիրան, 60-րդ էջում՝ նուշ, սերկեխ, պետք է լինի ծիրանենի, նշենի, սերկեխենի:

Ինչու՞ ասելի գեոնակալ, էրեք մենք ունենք մուրի, էլակ գեղեցիկ բառերը, կամ ինչու՞ մալինան անվանել արևայամուրի, էրեք ժողովուրդն այն կոչում է մոռ, որը մտել է գրականության մեջ (18-րդ էջի ձախ սյունակ):

Շատ ճապարհ է գեոնի երեսի ջրեր արտահայտությունը (26-րդ էջի աջ սյունակ), ավելի հարմար է ասել մակերեսային (ինչպես սովորաբար գործ է ածվում) կամ էլ ավելի լավ՝ վերերկրյա ջրեր:

Վերջին տարիները շատ հաճախ ան բառը սխալմամբ գործ են ածում անուն բառի փոխարեն: Լեզու սխալն արված է 27-րդ էջի երկու սյունակներում էլ: Անուն կոչվում է աճելու պրոցեսը, աճումը շարունակվող գործողություն է, իսկ ան ասելիս հասկացվում է այդ պրոցեսի արդյունքը որոշ ժամանակամիջոցում, օրինակ՝ մի տարվա ան:

36-րդ էջի աջ սյունակում կուլտուրա բառը գործ է ածվում բույս բառի փոխարեն: Խառնակ փոշոտվում են ոչ թե կուլտուրաները, այլ բույսերը, տվյալ գեոքում կուլտուրական՝ մշակովի բույսերը: Հաջող տերմին չէ տարբարջանում բառը (նույն տեղում):

Հանդեսի շատ տեղերում հանդիպում ենք թվում բառին (էջ 22, 50, 57), որը գործ է ածված առանձին թիվ համար, մինչդեռ թվում նշանակում է շատ թիվը միասին վերցրած: Ուստի վերջավորությունը հավաքականի իմաստ է տալիս բառին, օրինակ՝ կաղնուտ, սոճուտ, նշանակում է կաղնիներից, սոճիներից կազմված անտառ, պուրակ: Միայն է նաև ասել, որ լճի ջրից ազատվող հատակը ձածկված է ավազուտներով: Պետք է ասել՝ ավազով կամ՝ ջրից ազատվող ավերքը ավազուտներ են (8-րդ էջի ձախ սյունակ):

Ինչու՞ ասել թուղնավանդակ, էրեք խոսքը արհեստական թուղնարենին է վերաբերում, որտեղ բնակվող թուղններն ազատ էլումուտ ունեն: Վանդակը սովորաբար գործ է ածվում թուղնները փակ պահելու համար (53-րդ էջի ձախ և աջ սյունակները):

67-րդ էջի ձախ սյունակում գրված է կամբլայի, պետք է լինի՝ կամբլումի:

Հանդեսի գանազան հոգովածներում քիչ չեն
 նաև լեզվական սխալներն ու անհարթություն-
 ները: Յանկայի է. որ «Հայաստանի բնությունս-
 իր առջև խնդիր ցնի պարտերի ոչ միայն մեր
 բնության պահպանության, այլև մեր լեզվի
 մաքրության պահպանման համար:

Համարյա բոլոր լջերում հանդիպում ենք
 սառուսխալների և տպագրական սխալների:
 Սրինակ՝ 15-րդ լջում տպված է զիտսցիամին,
 հայերեն պետք է լինի հիտսցիամին: Նույն լջում
 տպված է Սարուստեր, պետք է լինի Աարուս-
 տեր:

18-րդ լջում շահալբալի փոխարեն տպված
 է շահալբալի: 26-րդ լջում փակագծերում պետք
 է լինի կապտամի, տպված է կապտամի: 29-րդ
 լջում ոտակերպն ПОВИЛНКА բառը տպված է ПОВЕ-
 ЛНКА: 42-րդ լջում տպված է Սենտի-Լերին,
 պետք է լինի Սենտ-Իլերին: 57-րդ լջում տպված
 է մարսելիա, պետք է լինի մարսիլիա կամ մար-
 սիլեա: «Գարունը Հայաստանում» հոդվածի 60-րդ
 լջի աջ սյունակում 4-րդ տողը անտեղի կրկնված
 է 13-րդ տողում, իսկ այն բառերը, որ պետք է
 լինեն այստեղ, բնագծանրապես բաց են թողնու-
 ված:

Հանդեսն բնագծանուր առմամբ փառ չէ ձեռ-
 վորված: Սպասարկում էն տարրեր շրիֆտներ,
 նաև բազմաթիվ լուսանկարներ և ձեռանկարներ:
 Վերևում թվարկված բացերը հեշտ ուղղելի
 են: Կարծում ենք, որ կարն ժամանակում «Հա-
 յաստանի բնությունս-ը կգտնի իր աշխատանքի
 ունը, բարձր մակարդակը՝ սկսած սրբապատկան,
 տպագրական գործից, մինչև խոր բմբռնումը
 այն մեծ խնդիրների, որ Կոմունիստական պար-
 տիան և Սովետական կառավարությունը գնում
 են մեր Հայրենիքի առջև: Հետզհետե ավելի ու
 ավելի որոշակի կգառնան նաև այն կանկրես
 նպաստակները, որոնց պետք է ձգտի հանդեսն
 յուրաքանչյուր հոգված, խնչպես և այն ուղիները,
 որոնցով պետք է առաջնորդվի խմբագրությունը,
 այդ հարցերը լուսարանելիս: Այս բոլորը նկատի
 առնելով, մենք կարող ենք ասել, որ թվարկված
 բացերը Գրոյսրովին չեն նսեմացնում սկսված
 գործի մեծ արժեքը, այս հանդեսի մեծ նշանա-
 կությունը:

Ա. Կ. ԱՐԱՐԱՍՅԱՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ղ ո ն յ ա ն Գ. Գ. Փոփոխական վիկի բիոլոգիական առանձնահատկությունները	3
Աղ ա բ ա թ յ ա ն Վ. Շ. Hydrangeaceae Dum. բնականի բի պալլենոմորֆոլոգիայի մասին	17
Կ ա բ ա պ ե տ յ ա ն Կ. Ա. Յածր ջերմաստիճանի ազդեցությունը դեղձենու երկամյա-բնձյուղների նյութափոխանակության վրա	27
Ս ի մ ո ն յ ա ն Ե. Հ. Արեածաղկի կորիզակների մասին բեղմնավորումից հետո	41
Ա յ բ ու մ յ ա ն Կ. Ա. Հայաստանում սրսորդական փաստանի կլիմայավարժեցման վերաբերյալ	45
Մ ի բ դ ո յ ա ն Ս. Ա. Արոսենու ցեղը և պայթաբու նրա դեմ Հայկական ՍՍԻ-ում	53
Մ ա բ դ ա թ յ ա ն Լ. Պ. Թեթջանյան Օ. Ե. Ուղեղիկի գերբ ըստըստըստ նյարդային համակարգում շնչերի մոտ	65
Խ ո ջ ու մ յ ա ն Մ. Գ. Ջերմուկի հանքային ջրով միանգամայն ստացման ազդեցությունը ստամոքսի սեկրետոր և մուտք ֆունկցիաների վրա	73

Համառոտ գիտական հաղորդումներ

Լ է դ ո ղ ի Ն. Ա. Սեանա լճի Oocystis-ները	81
Բ ա բ ա յ ա ն Ս. Ս. Մերատման ու թփի հնձման ազդեցությունը կարտոֆիլի բերրատվության և սերմացուի որակի վրա	87
Ա զ Ե տ ի ս յ ա ն Վ. Թ. Alyssum Լ. ցեղի նոր տեսակ Հայաստանից	93

Գրախոսություն

Ա թ ա թ ա տ յ ա ն Ա. Գ. «Հայաստանի բնություն» գիտա-մասնաշաղկան բյուլետեն № 1	97
--	----

